

## ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻԶԱՎԱՅՐՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԱՐՄԵՆ ԲԵՋԱՆՅԱՆ

Ժամանակակից սոցիալական աշխարհը բնութագրվում է նարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներում նկատվող տարաբնույթ կոնֆլիկտների կտրուկ աճով<sup>1</sup>: Եականորեն աճել է կոնֆլիկտների քանակը քաղաքականության, պետական ծառայության, ձեռնարկությունների և գործարար աշխարհի, ուսումնական հաստատությունների և զինծառայության ոլորտներում: Այս իրողությունը դրդել է կոնֆլիկտների հետազոտության ակտիվացմանը, խթանել խնդրահարույց դաշտում կատարելու միջգիտակարգային ընդհանրական հետազոտություններ և որոնել կոնֆլիկտների արդյունավետ լուծման կամ դրանց կառավարման նոր մեթոդներ: Սակայն, չնայած ստացված արդյունքներին, այդպիսի հետազոտությունների պահանջը չի նվազում: Այն հատկապես մեծ է կազմակերպություններում կոնֆլիկտների մասին հոգեբանական գիտելիքների ձեռքբերման առումով:

Չուկայական հարաբերությունների զարգացմանը գրում կամ դաշտում՝ հրատապ է դարձել նաև առևտրային կազմակերպություններում կոնֆլիկտների ուսումնասիրության պահանջը: Թեև այդպիսի հետազոտությունների ոչ քիչ փորձ է կուտակված արտասահմանում, սակայն մեր իրավական և սոցիալ-տնտեսական իրականության մեջ այդ արդյունքների մեխանիկական կիրառումը շատ դեպքերում իրեն չի արդարացնում, իսկ առևտրային կազմակերպություններում կոնֆլիկտների հայրենական կառուցողական հետազոտությունները շատ քիչ են:

Ելնելով խնդրի արդիականությունից, նրա գիտագործնական մեջ նշանակությունից, անբավարար մշակվածությունից, ինչպես նաև ազգային առանձնահատկություններից՝ այս հետազոտության մեջ կփորձենք բացահայտել կոնֆլիկտների հոգեբանական առանձնահատկությունները ժամանակակից «գործարար միջավայրում» և տալ դրանց կանխարգելման պատճառահամակարգային մեխանիզմները՝ գործնական մոտեցումները ճշգրտելու և որոշակի պայմաններում դրանք լուծելու համար:

Առաջադրված խնդիրները լուծելու նպատակով կիրառվել է համախումբ մեթոդական գործիքակազմ, որը մի կողմից ներառում է համագիտական մեթոդներ (տեսական վերլուծություն, ընդհանրացում, մաթեմատիկական վերլուծություն), մյուս կողմից՝ հոգեբանական մեթոդներ (հարցարերային հարցում, հարցագրույց, դիտում, համեմատական վերլուծություն, բանավեճ, թեստ, փորձագիտական գնահատական): Փորձագետների ընտրությունը իրականացվել է փորձագիտական 3 խումբ մեթոդների

<sup>1</sup> Տես Անցուս Ա. Յ., Շիպիլօվ Ա. Ի. Կոնֆլիկտոլոգիա. Մ., 1999, էջ 6:

օգնությամբ<sup>2</sup>. 1. ինքնազմահատման, 2. յուրաքանչյուր նասնագետի խմբովի գնահատման, 3. փորձագետի գնահատման՝ անցյալ գործունեության արդյունքի հիման վրա:

Հետազոտության գործիքակազմը (Երեք տիպի հարցաթերթային հարցում և երեք թեստ) ընտրվել է այն նպատակով, որ ճշգրտվեն այն գործուները և աշխատակիցների անձնային այն որակները, որոնք կարող են ազդել գործարարության ներքին նիշավայրի վրա, և բացահայտվեն այն հարաբերակցային (կոռելյացիոն) կապերը, որոնք առկա են աշխատանքային գործունեության ընթացքում աշխատակցի անձնային որակների և վարքի դրսուրումների միջև:

Ի դեպ, առաջին հարցաթերթի նպատակը ներքին այն հակասությունների բացահայտումն է, որոնք կարող են ծագել դեկավարների և աշխատակիցների միջև: Երկրորդ հարցաթերթի նպատակը կազմակերպության ուժեղ և բույլ կողմերի բացահայտումն է: Երրորդի նպատակը հիմնարկի գործունեության հիմնական գերակայությունների ու նպատակների, աշխատանքային գործունեության նկատմամբ աշխատակիցների մոտիվացիայի պարզաբանումն է:

Հարցախույզը իրականացվել է Երկու ուղղությամբ. առաջին դեպքում խնդիր է դրվել բացահայտել էնպիրիկ հետազոտության խնդրահարույց դաշտը, բովանդակությունը և ձեռնարկատերների՝ որպես փորձագետների հետ հարցագրույց անցկացնելու հիմնա վրա մշակել փորձագիտական գնահատման համար անհրաժեշտ հարցարանի առաջին տարբերակը: Տվյալ հարցաթերթիկն էլ հենց հիմք է դարձել համատարած հարցախույզի համար: Այս առունով առևտորային կազմակերպությունների աշխատակիցների փորձագիտական հարցման և համատարած հարցման թերթիկները ձևով և բովանդակությամբ խիստ մոտ են:

Փորձագետի դերում հանդես են եկել Երևանի, Վանաձորի և Ստեփանավանի մի շարք խոստումնալից ձեռնարկատերեր, փոքր և միջին գործարարության ներկայացուցիչներ, որոնք հետաքրքրություն են ցուցաբերել սույն հետազոտության նկատմամբ: Փորձագիտական գնահատմանը մասնակցել է Երևուն ձեռնարկատեր, որոնցից 40%-ը՝ կին, 60%-ը՝ տղամարդ. նրանց միջին տարիքը 30-45 է, իսկ առևտորային կառույցներում ունեցած աշխատանքային փորձառությունը՝ միջինը 7 տարի:

Երկրորդ ուղղությամբ իրականացվել է աշխատակազմի ու դեկավարների հարցաթերթային հարցում և թեստավորում: Այս նպատակով ընտրվել են արտադրության, առևտության և սպասարկման ոլորտների կազմակերպություններ: Հետազոտվողների ընդհանուր թիվը 120 է, որոնցից 57%-ը՝ տղամարդ և 43%-ը՝ կին, միջին տարիքը՝ 35, իսկ աշխատանքային ստաժը կազմակերպություններում՝ 7,7 տարի: Հարցվողների 58%-ը հումանիտար կրթությամբ է, 32%-ը՝ տեխնիկական, 10%-ը՝ բնագիտական: Պատասխանողներից 36-ը արտադրության ներկայացուցիչներ են, 34-ը ներկայացնում են առևտուրն ու միջնորդական գործունեությունը, 30-ը՝ հանակարգչային սպասարկման ծառայությունը, իսկ 20-ը տարբեր առևտորային կազմակերպությունների դեկավարներ են:

<sup>2</sup>Տե՛ս Յ. Մ. Ավանեսյան, Փորձարարական հոգեբանություն, Եր., 2010, էջ128:

Անկետավորման վերլուծությունը պարզեց, որ պատասխաններում գենդերային տարբերությունները էական չեն և պայմանավորված են միայն կանանց ու տղամարդկանց կոնֆլիկտայնության աստիճանով: Տարիքային գործոնները նույնանուն էական ազդեցություն չունեցան, քանի որ պատասխանները գտնվում էին տարիքային նոտ խմբերում: Մասնավորապես, 40 տարեկանից բարձր պատասխաննողները 13-ն էին, իսկ 21-ից ցածր՝ ընդամենը 2-ը: Այդ իսկ պատճառով ընտրանքը կարելի է հանարել համատարր: Աշխատակիցների բաշխվածությունը համապատասխան կազմակերպություններում՝ համակարգչային ծառայություն, առևտրային կազմակերպություն և արտադրություն, նույնանուն էական տարբերություններ չհայտնաբերեց պատասխաններում՝ բացառությամբ 2-րդ և 5-րդ հարցադրումների, որը նշանակում է, որ ցածր մասնագիտական կարողությունները և ակտիվ գործընկերային շփումները ուղիղ համեմատական են անհամաձայնություններին, լարվածության ամեն, կոնֆլիկտներին:

Այսինքն՝ կոնֆլիկտների առաջացման պայմանները, ընթացքը և յուրահատկությունները բնորոշ են բոլոր տիպի առևտրային կազմակերպություններին, և գործունեության բնույթը էական ազդեցություն չունի կոնֆլիկտների առաջացման և ընթացքի վրա:

Հարցաթերային հարցման համեմատական վերլուծությունը բացահայտեց, որ կազմակերպության ղեկավարները և աշխատակազմը համակարծիք են, որ իրենց կազմակերպություններում կոնֆլիկտներ լինում են 91% և 78% հարաբերությամբ (ինչպես հիմա, այնպես էլ հետագայում առաջին պատասխանները ղեկավարներին են, իսկ երկրորդը՝ աշխատակիցներինը), սակայն ղեկավարները հակված են դրանց մեջ տեսնելու կառուցղական (34%) և ախտորոշիչ (30%) գործառույթ, իսկ աշխատակիցները՝ ապակառուցղական (50%), լավագույն դեպքում՝ ախտորոշիչ (30%): Այս միտումը նկատվում է նաև կոնֆլիկտների նկատմամբ ծեավորված դիրքորոշման առումով (46,7% և 66,4%). ակնհայտ է, որ անձնակազմը ավելի հոգականորեն է արձագանքում կոնֆլիկտներին, ցավագին վերապրում դրանք: Սա մի քանի պատճառների հետևանք է, որոնցից կարևորագույնն այն է, որ ուղղահայաց կոնֆլիկտների ժամանակ հաղթելու հնարավորություն գործնականում ունի ղեկավարը, իսկ անձնակազմի ներկայացուցիչն ունի հաջողության հասնելու նվազագույն հնարավորություն, ինչը հաստատվեց նաև աշխատակիցների հետ ունեցած գրույցի ընթացքում: Բացի այդ՝ շատ ղեկավարներ հակված են կոնֆլիկտների լուծման ժամանակ խախտելու օրենքը (43% և 56%): Մյուս կողմից, երկրում բնակչության չափազանց ցածր իրավական պաշտպանվածության հետևանքով առևտրային կազմակերպությունների աշխատակիցների համար լուրջ սպառնալիք է ուղղահայաց կոնֆլիկտների մասնակից լինելու պատճառով աշխատատեղի կորուստը:

Կոնֆլիկտների տիպաբանության վերաբերյալ, ինչպես երևում է, կարծիքների տարբերություն կա միայն հորիզոնական կոնֆլիկտների հատվածում. ղեկավարները գտնում են, որ դրանք բավականաչափ մեծ են՝ 46%, իսկ ըստ աշխատակիցների՝ հորիզոնական կոնֆլիկտներ գրեթե չկան՝ 7%: Սա հոգեբանական երևույթի դրսերում է, որը կոչվում է կազմա-

կերպչական իրավիճակների անհամաշափ ընկալում, որը բնորոշ է նույն կազմակերպությունում ստորակարգային տարբեր տեղաբաշխում ունեցող անձանց<sup>3</sup>:

Աշխատակիցների հարաբերություններում որպես խնդիր հարցվողները կարևորում են նրանց հաճախակի լարված հոգեվիճակը՝ 40%, մասնագիտական անհրագեկությունը՝ 28%, և համագործակցելու հմտության բացակայությունը՝ 24%:

Միջանձնային կոնֆլիկտների պատճառը դեկավարները հակված են տեսնելու աշխատակիցների անձնային որակների մեջ, անտեսելով սեփական կառավարման թերությունները, իսկ դա անգիտակցաբար նրանց ապահովագրում է պատասխանատվություն ստանձնելուց աշխատակիցների ապակառուցողական հարաբերությունների համար: Այս տեսակետը հաստատվում է նաև այն հարցադրման վերլուծությամբ, որով դեկավարները փոքր-ինչ գերագնահատել են կոնֆլիկտային անձանց քանակն իրենց կազմակերպություններում, այն է դեկավարների 62%-ը գտնում է, որ կոնֆլիկտային աշխատակիցները բավականին շատ են, իսկ աշխատակիցների ընդամենը 32%-ն է համաձայն այդ կարծիքին:

Նմանատիպ պատկեր ենք տեսնում նաև բախման հենքին վերաբերող կարծիքների դեպքում. դեկավարներն այստեղ ևս հակված են փոքր-ինչ չափազանցելու միջանձնային հարաբերությունների կարևորությունը ստեղծված կոնֆլիկտներում՝ 60% և 30% հարաբերությամբ:

Դեկավարները գտնում են, որ կոնֆլիկտ նախաձեռնողները տարեց կարդերն են: Չետաքրքիր է, որ ինչպես դեկավարները, այնպես էլ աշխատակազմի ներկայացուցիչները նշել են բավականին բարձր կոնֆլիկտայնություն կանանց և ընդհանրապես անձակազմի ներսում: Աշխատակազմի կոնֆլիկտայնությունը կարող է ունենալ հոգեբանական երկակի պատճառ: Մի կողմից դեկավարը (սեփականատերը) ձգտում է, որ աշխատակիցը իրականացնի հնարավորինս ավելի շատ գործառույթներ, իսկ աշխատակիցը՝ միայն պայմանագրով նախատեսված գործողություններ, այսինքն՝ առկա է հարաբերությունների ակնհայտ անհամաձայնություն: Մյուս կողմից, շատերն աշխատանքի ընդունվելիս հաճախ բաքցնում են իրենց իրական դրդապատճառներն ու նպատակները, սակայն դրանք անպայմանորեն ի հայտ են գալիս՝ խթանելով կոնֆլիկտային իրավիճակների ստեղծումը:

Կանանց կոնֆլիկտայնությունը շատ դեպքերում պայմանավորված է իրենց բնորոշ մրցակցությամբ, գերիշխող դիրք գրավելու ձգտումով և բավականին բարձր հավակնությունների մակարդակով<sup>4</sup>:

Դեկավարները իրենց կարողությունները կոնֆլիկտների լուծման վերաբերյալ օգալի գերագնահատել են. 31%-ը բարձր է գնահատել կոնֆլիկտները լուծելու իրենց ունակությունները, որի հետ համաձայն չեն աշխատակիցները, որոնց 61%-ը կոնֆլիկտները լուծելու դեկավարների կարողությունները գնահատել է ցածր:

<sup>3</sup> Տե՛ս Տոլոչեկ Վ. Ա. Асимметрия восприятия партнеров по управлениюской деятельности // «Акмеология», 2001, № 1, էջ 36-41:

<sup>4</sup> Տե՛ս Զազիկин Վ. Ղ., Նեчаева Հ. Ը. Վведение в психологию конфликтов на примерах конфликтов в коллективах организаций. М., 1996, էջ 35:

Եական տարբերություն է նկատվում նաև աշխատակիցներից դեկավարների սպասելիքների և աշխատակիցների ընկալման միջև։ մասնակիցները կարևորել են պատասխանատու վերաբերմունքը՝ 49% և հետևնդականությունը՝ 42% հարաբերությամբ, որն ըստ էռթյան նույն ենթատեքստն ունի, այն դեպքում, երբ դեկավարները կարևորում են հիմնարկի վարկի պահպանումն ու բարձրացումը՝ 55% և գործունությունը՝ 30% հարաբերությամբ։

Երկրորդ և երրորդ հարցաթերթային հարցման վերլուծությունը հնարյավորություն տվեց եզրակացնելու, որ դեկավարները հիմնարկի թե դրական, և թե բացասական միտուններից կարևորել են աշխատակցին տրվող աշխատավարձը։ մի կողմից նրանք գտնում են, որ իրենք վճարում են ավելի, քան արժե կատարված աշխատանքը, սակայն մյուս կողմից գիտակցում են, որ դա բավարար չէ աշխատակցին լիարժեք կենսակերպ ապահովելու համար։ Իսկ աշխատակիցների շրջանում հստակ նկատվում է այն միտունը, որ նրանք հեշտությամբ հարմարվում են հիմնարկի ընձեռած դրական զարգացուներին (կարգավիճակի բարձրացում, բոնուս, 13-րդ աշխատավարձ և այլն), սակայն որոշ ժամանակ անց սկսում են չկարևորել դրանք, միտուն ունենալով տեսնելու բացասական դրսերուները։ Դեռ քառորդ դար առաջ կլայդ Կումբսը և Անն Արբորն ու Զորջ Էվրանին նկատել են, որ մարդիկ դրականին, լավին շուտ են սովորում, ու այդ դրականն սկսում է ընկալվել որպես տրվածություն, շնորհ, ինչն էլ իր հերթին խաթառում է անձի դրական հույզերի պահպանումը<sup>5</sup>։

Յակասություն կա նաև դեկավարների և աշխատակիցների միջև աշխատակցի գործունեության նպատակի վերաբերյալ։ Ըստ դեկավարների՝ աշխատակցին հստակ ներկայացված են իր գործունեության (աշխատակցի) նպատակն ու պարտականությունները, սակայն աշխատակիցների կարծիքով՝ հստակ չեն իրենց գործունեության նպատակն ու պարտականությունները, որը լուրջ խնդիր է հանձնարարականների կատարման համար։

Նմանատիպ մոտեցում ենք տեսնում նաև այն հարցում, թե որքանո՞վ է պաշտոնական հրահանգն ամբողջական, և պարունակո՞ւմ է իր մեջ բոլոր այն գործառույթները, որոնք պահանջվում են աշխատակցից։ Այստեղ ևս կարծիքները էականորեն տարբերվում են։

Այսպիսով՝ համեմատական վերլուծությունը պարզեց, որ մի շարք գնահատականներում առկա են լուրջ տարածայնություններ առևտրային կազմակերպությունների դեկավարների և աշխատակիցների միջև։ Այդ տարածայնությունները ոչ միայն չեն նպաստում հորիզոնական և ուղղահայաց հարաբերությունների ներդաշնակ ծևավորմանը, այև պատճառ են դառնում լուրջ կոնֆլիկտների։

Թեստերի վերլուծության ժամանակ կիրառվել է Պիրսոնի գծային հարաբերակցության բանաձեռ N=30-ի համար, որտեղ  $P<0.05$  նշանակալիության համապատասխան կախվածությունները համարվում են հավաստի՝ սկսած  $r=0.34$  գործակցից։ Կատարվել է «Մեծ հնգյակի» ենթագործուների և

<sup>5</sup> Steu Deutsch M. The effects of cooperation and competition upon group process II Human Relations 2. N.Y., 1978, էջ 129-152, 199-231:

«Թոմասի հարցարանից» ստացվող կոնֆլիկտային վարքի հակվածության ցուցանիշների հարաբերակցային վերլուծություն, որի շնորհիվ պարզվել է, որ մրցակցային վարք դրսևորող անձինք, կարևորելով կարիքան, ենթարկվում են դեկավարին, բավարարված են աշխատանքային պայմաններից, գերիշխող են, եռանդուն, նախաձեռնող, բարձր են գնահատում հիմնարկի վարկանիշը, սակայն կասկածամիտ են, հակված չեն ժողովրդավարական կառավարման ոճին, թույլ է զարգացած ինքնավերահսկումը:

Դանագործակցային վարք դրսևորող անձինք կարևորում են իրենց անձի նկատմամբ ուշադրությունը, ժողովրդավարական կառավարման ոճը, հիմնարկի վարկանիշը, վստահությունը, սակայն ունեն ընդդիմադիր կեցվածք, բողոքում են աշխատանքային պայմաններից, ունեն ցածր նախաձեռնողականություն ու եռանդ:

Դարմարկող վարք դրսևորող անձինք հակված են դեմոկրատական կառավարման ոճին, վստահելի են, կատարող, ենթարկվող: Գործունեության հիմնական շարժառիթը զբաղվածության ապահովումն է, չեն դրսևորում նախաձեռնողականություն ու եռանդ, չեն կարևորում հիմնարկի վարկանիշը:

Փոխգիշումային վարք դրսևորող անձինք կարևորում են վստահությունը, համագործակցությունը: Նրանց գործունեության շարժառիթը զբաղվածության ապահովումն է: Նմանատիպ անձանց համար էական չէ հիմնարկի վարկանիշը, վերջիններս հակված չեն դեպրեսիվության:

Խուսափողական վարք դրսևորող անձինք իրատես են, ձգտում են հուզական հարմարավետության, ենթարկվող են, գործունեության շարժառիթը զբաղվածության ապահովումն է:

Կոնֆլիկտներն առևտրային կազմակերպություններում հիմնականում միջանձնային են և հուզական, հորիզոնական, կարճատև, տենդային՝ սևեռված առարկայի վրա. Ժամանակի առումով՝ կարճատև, արդյունքի տեսանկյունից՝ ապակառուցողական, սակայն ունեն նաև կանխորոշիչ նշանակություն:

Առևտրային կազմակերպություններում որպես կոնֆլիկտի հենք հանդես են գալիս օբյեկտիվ հակասություններ՝ կապված մրցակցային միջավայրում աշխատանքների կազմակերպման հետ: Աշխատակիցների անձի զարգացման և մասնագիտական աճի հակասությունները կրում են սուբյեկտիվ բնույթ և պայմանավորված են անձնային գործոններով: Բախումներում որպես հոգեբանական պատճառներ գերակշռում են ներկազմակերպչական մրցակցությունը, հոգեբանական անհամատեղելիությունը, կորպորատիվ մշակույթի ցածր մակարդակը:

Կոնֆլիկտային հակադրության դրդապատճառները առանձնանում են մեծ բազմազանությամբ, և կոնֆլիկտներն իրենց զարգացման ընթացքում անցնում են կազմակերպչական կոնֆլիկտների տիպային փուլերով, սակայն դրանց ընթացքը պայմանավորված է նաև ընդդիմախոսների վարքային դրսևորումներով, որը հաճախ լինում է դժվար տեսանելի և սակավ իրազեկային: Կոնֆլիկտների լուծման ընթացքում առևտրային կազմակերպությունների դեկավարները՝ որպես «դատավոր», հաճախ դրսևորում են հարկադրման, ստիպողականության մոտեցում, որը բխում է կոնֆլիկտի սեփական ընկալումից:

Բավականին ցածր է դեկավարների և կառավարիչների կոնֆլիկտաբանական իրազեկության, միջանձնային կոնֆլիկտներ լուծելու հմտությունների մակարդակը: Չի իրականացվում, կամ գրեթե չի իրականացվում կազմակերպության հոգեբանական մթնոլորտի մշտադիտարկում:

Առևտրային կազմակերպություններում թիւ ուշադրություն է դարձվում կորպորատիվ մշակույթի՝ որպես կոնֆլիկտանվազ կառավարման միջոցի զարգացմանը:

Կազմակերպություններում ցածր մակարդակի վրա են գործարար միջավայրի կոնֆլիկտների կանխարգելման և կանխման հոգեբանական պայմանների ու գործոնների ուսումնասիրությունները:

Բարձր մակարդակի վրա չեն կառավարիչների և դեկավարների կառավարման հմտությունները, կառավարման ժամանակ գերակշռում են կարծրատիպային մոտեցումները:

Առևտրային կազմակերպություններում կոնֆլիկտների կանխարգելման և կանխման կարևորագույն պայմաններից են դեկավարների և կառավարիչների կոնֆլիկտաբանական իրազեկության զարգացումը, միջանձնային արդյունավետ հաղորդակցման և փոխազդեցության պայմանների ձևավորման նպատակով կողմերի պատկերացումների անհավասարակշռության, հոգեբանական անհամատեղելիության և այլ դրսևորումների հոգեբանական պատճառների վերացումը, կադրային քաղաքականության և կորպորատիվ մշակույթի զարգացումը: Կարևոր հոգեբանական գործոններից են նաև հարաբերությունների, հաղորդակցման և հոգեբանական մթնոլորտի մշտադիտարկումը, դեկավարների և կառավարիչների կոնֆլիկտային իրավիճակներում գործելու պատրաստվածության զարգացումը:

**АРМЕН БЕДЖАНЯН – Специфика проявления конфликтов в бизнес-среде.** – В статье анализируются психологические предпосылки конфликтных ситуаций в коммерческих организациях. Эмпирические исследования – экспертные оценки, анкетный опрос, наблюдения, тестирование и интервью – обнаружили основные противоречия, которые ведут к возникновению в коммерческих организациях конфликтов. Оценочные суждения владельцев, руководителей и персонала таких организаций об имевших место у них конфликтах дали необходимый материал для сравнительного анализа, обобщений, системного описания конфликтов в бизнес-среде. Разработаны рекомендации по их предупреждению, профилактике и разрешению.

**ARMEN BEJANYAN – The Peculiarities of Expressions of Conflicts in Business Environment.** – In this report the psychological preconditions of emergence and manifestation of conflicts in commercial organizations are represented.

As a result of empirical studies, i.e. questionnaire surveys, expert appraisal interviews, observation and testing the main preconditions of arising the conflicts in commercial organizations was revealed. The comparative analysis and the final conclusion gave necessary information about the structured description, prevention and solution development of conflicts in commercial organizations.